

COVID-19 պատվաստանյութեր

Աշխատանքի առողջության և անվտանգության տեղեկատվություն աշխատողների համար

Հնարավոր է ես ստիպողաբար պատվաստում ստանամ

Դուք չեք կարող ստիպողաբար պատվաստում ստանալ կամ ենթարկվել որևէ բժշկական միջամտության ձեր կամքին հակառակ:

Սակայն, որոշ դեպքերում, հնարավոր է լինեն [հանրային առողջապահության հրահանգներ](#), որոնք կպահանջեն, որ դուք պատվաստում ստանաք, որպեսզի աշխատեք բարձր ռիսկային արդյունաբերության մեջ: Տեղեկացված եղեք ձեր առողջապահական գործակալության խորհուրդներին:

Կարող է իմ գործատուն պահանջել ինձ պատվաստել COVID-19-ի դեմ աշխատանքային առողջության և անվտանգության օրենքների համաձայն

Աշխատողների մեծամասնության համար ձեր գործատուն չի կարող պահանջել, որ դուք պատվաստվեք աշխատանքային առողջության և անվտանգության օրենքների համաձայն:

Սակայն, կարող են լինել բացառություններ, հատկապես, եթե դուք աշխատում եք այնպիսի ոլորտներում, որտեղ կա բարձր ռիսկի ազդեցություն: Հնարավոր է, որ նաև լինեն հատուկ [հանրային առողջապահության հրահանգներ](#), որոնք կպահանջեն ձեզ պատվաստվել:

Եթե ձեր գործատուն պահանջում է ձեզ պատվաստվել, նրանք պետք է տրամադրեն ձեզ տեղեկատվություն և նյութեր, որպեսզի տեղեկացված որոշում կայացնեք: Ձրուցեք ձեր բժշկի հետ, եթե դուք մտահոգություններ ունեք: Օգնության համար՝ կապվեք ձեր [աշխատանքի առողջության և անվտանգության կարգավորչի](#), առողջության և անվտանգության ներկայացուցչի (HSR) կամ աշխատակիցների կազմակերպության հետ:

Ձեր աշխատավայրի իրավունքների մասին տեղեկատվության համար, զրուցեք [Արդար աշխատանքի իրավապաշտպանի](#) հետ:

Ի՞նչ կասեք իմ պարտականության մասին՝ որպես աշխատողի, աշխատանքային առողջության և անվտանգության օրենքների համաձայն: Արդյո՞ք սա նշանակում է, որ ես պետք է պատվաստվեմ

Որպես աշխատող՝ դուք պետք է պատասխանատվորեն հոգ տանեք ձեր մասին և չանեք որևէ բան, որը բացասաբար կազդի ուրիշների առողջությանը և անվտանգությանը աշխատավայրում: Դուք պետք է պատասխանատվորեն հետևեք ձեր գործատուի առողջության և անվտանգության հրահանգներին, որքան դա հնարավոր է:

Եթե կա որևէ օրենք կամ հանրային առողջապահության հրահանգ, որը պահանջում է ձեզ պատվաստվել, հնարավոր է ձեզ անհրաժեշտ լինի պատվաստել՝ աշխատելու կամ շարունակելու աշխատել տվյալ ոլորտում:

Արդյո՞ք իմ գործատուն պետք է գրուցի ինձ հետ՝ նախքան պատվաստում պահանջելը իմ աշխատավայրում

Այո: Եթե ձեր գործատուն նկատի է առնում պարտադիր պատվաստման քաղաքականություն, նա պետք է խորհրդակցի ձեզ և ձեր առողջության և անվտանգության ներկայացուցչի հետ, եթե այդպիսին կա՝ նախքան որևէ գործողություն ձեռնարկելը: Դուք պետք է տեղեկացնեք նրան, եթե կա որևէ պատճառ, թե ինչու դուք չեք կարող պատվաստվել:

Ես պատվաստված եմ: Արդյո՞ք ես դեռ պետք է պահպանեմ այլ նախազգուշական միջոցառումներ, ինչպիսիք են՝ ֆիզիկական հեռավորությունը և ձեռքերը լվանալը

Այո: Անվտանգ և արդյունավետ պատվաստանյութը համայնքը անվտանգ և առողջ պահելու մի մասն է: Շարունակեք կատարել հետևյալ քայլերը՝ կանխելու COVID-19-ի տարածումը.

- հետևեք հանրային առողջապահության հրահանգներին
- մի հաճախեք աշխատանքի, երբ լավ չեք զգում ձեզ, ունեք COVID-19 ախտանշաններ կամ առողջապահական պատասխանատուների կողմից հրահանգվել է, որ դուք տանը մնաք
- կատարեք ամեն ինչ պատասխանատվորեն, որպեսզի աշխատեք անվտանգ, ներառյալ՝ COVID-19-ի դեմ միջոցառումների պահպանում, ինչպիսիք են՝ ֆիզիկական հեռավորությունը և մաքրումը
- հետևեք հրահանգներին
- հարցրեք, եթե դուք վստահ չեք, թե ինչպես պետք է անվտանգ կատարել աշխատանքը
- օգտագործեք անձնական պաշտպանիչ սարքավորումներ (PPE), ինչպիսիք են՝ ձեռնոցները, այնպես, ինչպես ձեզ սովորեցրել և հանձնարարել են դրանք օգտագործել
- Տեղեկացրեք ցանկացած վտանգավոր իրավիճակի մասին ձեր ղեկավարին կամ առողջության և անվտանգության ներկայացուցչին:

Լրացուցիչ տեղեկություններ

- [Առողջապահության և պատվաստանյութերի տեղեկատվություն. Առողջապահության նախարարություն](#)
- [Աշխատանքի առողջություն և անվտանգություն. Անվտանգ աշխատանք Ավստրալիա](#)
- [Աշխատավայրի իրավունքներ. Արդար աշխատանքի իրավապաշտպան](#)